ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

ՎԱՐԴՈՒՇ ԳՅՈՉԱԼՅԱՆ

Տնտեսության մեջ նյութական և ոչ նյութական ոլորտների սահմանազատումը, ինչպես նաև դրանց կարևորության խնդիրը մակրոտնտեսության զարգացման գործում, գտնվել է տնտեսագետների ուշադրության կենտրոնում դեռևս հնագույն ժամանակներից: Արիստոտելը տնտեսության և մարդկանց գործունեության բոլոր ձևերը վերագրում է կա՛մ բնական ոլորտին՝ էկոնոմիկային, կա՛մ ոչ բնական ոլորտին՝ քրեմատիստիկային (հունարեն քրեմոս՝ ունեցվածք բառից)[1]:

Էկոնոմիկան Արիստոտելի դատողություններում ներկայացվում է որպես հողագործության մեջ զբաղված մարդկանց գործունեություն, ինչպես նաև ներառում է արհեստները և մանր առևտուրը: Էկոնոմիկայի հիմնական նպատակը մարդկային կենսական պահանջմունքների բավարարումն է, հետևաբար այն առաջնային է և պետք է լինի պետության հոգածության հիմնական առարկան: Քրեմատիստիկան խոշոր առևտրային գործարքներից հարստության կուտակումն է վերավաճառելու և վաշխառուական գործարքների միջոցով: Նրա նպատակն անսահման է, քանի որ գլխավորը «փողին տիրելն է»:

Շատ ավելի ուշ արդեն դասական քաղաքատնտեսության ակնառու ներկայացուցիչ Ադամ Սմիթը արտադրողական աշխատանք է բնորոշում այն, ինչը «մեծացնում է վերամշակվող նյութերի արժեքը, ... ամրակցվում և իրացվում է ինչ-որ առանձին արդյունքի կամ ապրանքի մեջ, որը կարելի է վաճառել, և որը առնվազն գոյություն ունի որոշ ժամանակ այն բանից հետո, երբ աշխատանքն ավարտվել է»[2]:

Հետևաբար, Ա. Սմիթը ծառայությունների ոլորտը համարում է ոչ արտադրողական, քանի որ ծառայությունը «արժեքին ոչինչ չի ավելացնում ... չի ամրակցվում և չի իրացվում վաճառքի համար պիտանի որևէ առանձին արդյունքի կամ ապրանքի մեջ»[3]:

Դասական քաղաքատնտեսության մեկ այլ հանճարեղ ներկայացուցիչ՝ Կարլ Մարքսը, կապիտալի տեսության մեջ նշում է, որ «միայն այն բանվորն է արտադրողական, որը կապիտալիստի համար արտադրում է հավելյալ արժեք կամ ծառայում է կապիտալի ինքնաճին»[4]: Ընդ որում,

---

[1] Տե՛ս **Յա. Ս. Յադգարով,** Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Եր., 2001, էջ 18:

[2] "Антология экономической классики". Т. 1. М., 1993, с. 356-357:

[3] Նույն տեղում:

[4] **Маркс К**., **Энгельс Ф**. Соч., 2-е изд. Т. 23, с. 206.

ըստ Կ. Մարքսի՝ հավելյալ արժեք կարող է ստեղծվել ոչ թե շրջանառության, այլ միայն արտադրության ոլորտում:

Իհարկե, տնտեսության հետագա զարգացումները ապացուցեցին դասականների վերոնշյալ դրույթների անկատարությունը, իսկ ժամանակակից տնտեսագիտության սկզբունքները առավել օբյեկտիվորեն ամրապնդեցին տնտեսության ոչ նյութական արտադրության ոլորտի դերն ու կարևորությունը մակրոտնտեսության մեջ:

Այդուհանդերձ, հաշվի առնելով համաշխարհային տնտեսության՝ 2008 թ.-ից սկսած ճգնաժամային զարգացումները, շատ վերլուծաբաններ վերստին սկսեցին ակտիվորեն շրջանառել տնտեսության մեջ իրական հատվածի առաջնահերթության գաղափարը՝ որպես տնտեսության կայունացման հենակետ:

Ճգնաժամը ցույց տվեց, որ ցանկացած երկրի համար իրական հատվածն է տնտեսական ամուր հիմքը, որի վրա պետք է կառուցվի կայուն տնտեսական աճի քաղաքականությունը[5]:

«Իրական հատված» տնտեսագիտական տերմինը դարձավ մասնագիտական հրապարակումներում առավել հաճախ օգտագործվող հասկացություններից մեկը:

Չնայած այդ ամենին՝ մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ բավականին հազվադեպ է անդրադարձ կատարվում նշված տերմինի բովանդակության լիարժեք մեկնաբանմանը, ինչը հաճախ թյուրըմբռնման և հակասությունների տեղիք է տալիս:

Մեր ուսումնասիրած հայրենական տնտեսագիտական գրականության մեջ չհաջողվեց գտնել տնտեսության իրական հատվածի բովանդակության և ոլորտների հստակ սահմանազատմանը վերաբերող որևէ համակողմանի մեկնաբանություն: Մասնավորապես, հայ մասնագետների հեղինակած «Տնտեսագիտական բացատրական բառարանում»[6] բացակայում են ոչ միայն «տնտեսության իրական հատված», այլև ընդհանրապես «տնտեսության հատված» հասկացությունները:

Ե. Ռումյանցևայի հեղինակած «Նոր տնտեսագիտական հանրագիտարանում» «տնտեսության հատված» (сектор экономики, economic sector) տերմինը բնութագրվում է որպես տնտեսական համակարգի տարր, ընդհանուրի մաս, որը դասակարգվում է ըստ հետևյալ առանձնահատկությունների՝

• սեփականության ձևի (պետական, մասնավոր, մունիցիպալ),

• արտադրության չափերի (խոշոր (կորպորատիվ), միջին, մանր),

• ներդրումային գործունեության ուղղությունների (իրական, ֆինանսական),

• ճյուղերի (արդյունաբերական, բանկային և այլն)[7]:

---

[5] Տե՛ս **Ա. Խ. Մարկոսյան**, **Մ. Գ. Մանուկյան**, Առևտրային կազմակերպությունների արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները ՀՀ իրական հատվածում, Եր., 2010, էջ 5:

[6] Տե՛ս **Գ. Ե. Կիրակոսյան, Հ. Բ. Ղուշչյան, Ի. Տ. Տիգրանյան**, Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., 1999, 464 էջ:

[7] Տե՛ս **Румянцева Е. Е.** Новая экономическая энциклопедия. М., 2005, էջ 478:

Սակայն Ե. Ռումյանցևան փաստորեն բավարարվում է միայն իրական հատվածի սահմանազատմամբ՝ որպես դասակարգման հիմք նշելով ներդրումային գործունեության ուղղությունը (տվյալ դեպքում նկատի ունենալով լայն առումով ողջ նյութական արտադրության ոլորտը): Առանձին իրական հատվածի բնորոշումը բացակայում է:

Ըստ մեկ այլ տեսակետի՝ «տնտեսության հատվածը» մակրոտնտեսության խոշոր մասն է, որն օժտված է համատեղելի ընդհանուր բաղադրիչներով, ինչը հնարավորություն է տալիս առանձնացնելու այն տնտեսության մյուս հատվածներից՝ տեսական կամ գործնական նպատակներով:

• Ըստ տնտեսավարման ձևի՝ առանձնացնում են մասնավոր, պետական և այլ հատվածներ:

• Ըստ արտադրանքի տեսակի՝ տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածներ:

• Իրական հատվածը վերաբերում է տնտեսության արտադրական հատվածին, որն անմիջականորեն կապված է նյութական արտադրության, շահույթի ստացման և բյուջեի համալրման հետ[8]:

Ակնհայտ է, որ վերոնշյալ սահմանմամբ ևս իրական հատվածը ներառում է մակրոտնտեսության մեջ ձեռնարկատիրության այն մասը, որը զբաղվում է նյութական բարիքների արտադրությամբ, այլ կերպ ասած՝ չի ներառում ծառայությունների ոլորտը: Հատկանշական է, որ այստեղ ընդգծվում է իրական հատվածի ևս մի բնութագրիչ, այն է՝ շահույթի հետապնդումը, ինչն էլ իր հերթին ենթադրում է համապատասխան հարկերի վճարում և այս առումով՝ բյուջեի համալրում:

«Տնտեսության իրական հատվածը» բնութագրվում է նաև որպես տնտեսության այն ճյուղերի համախումբ, որոնք տալիս են նյութական արտադրանք, հարստության ոչ նյութական ձևեր, մատուցում ծառայություններ՝ բացառությամբ ֆինանսավարկային և բորսայական ոլորտներում կատարվող գործառնություններից[9]:

Ռուսական օրենսդրության մեջ օգտագործվող տերմինների բառարանը տալիս է այդ հասկացության հետևյալ բացատրությունը. տնտեսության իրական հատվածը հասկացություն է, որն օգտագործվում է կառուցվածքային վերափոխումները և տնտեսական աճը սպեկուլյատիվ կապիտալի շարժին հակադրելու համար: Իրական հատվածը ներառում է ինչպես նյութական արտադրության ճյուղերը, այնպես էլ ոչ նյութական հարստության և ծառայությունների ոլորտը[10]:

Ինչպես տեսնում ենք, նշյալ երկու սահմանումներում հարստության ոչ նյութական ձևերը և ծառայությունների ոլորտը ևս ներառվում են իրական հատվածում, ինչի հետ միանշանակ համաձայնել չենք կարող, քանի որ, հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների և տեղեկատվական հոսքերի դինամիկայի պայմաններում ժամանակակից տնտեսության բուռն զարգացումները, իհարկե, ծառայությունների ոլորտն իրենից ներկայացնում է

---

[8] Տե՛ս http://www.glossary.ru

[9] Տե՛ս **Копурлин В. Н., Остапенко Д. В.** Новый экономический словарь. Ростов-на-Дону, 2008, էջ 428:

[10] Տե՛ս http://www.Kodeks.ru

տնտեսության առանձին հատված, որն «ուղղված է հասարակության ոչ նյութական պահանջմունքների բավարարմանը»[11] և չի կարող իրական հատվածի բաղադրիչ հանդիսանալ:

Սակայն, միևնույն ժամանակ, այս երկու հատվածների միջև դժվար է հստակ սահմանագիծ անցկացնել, քանզի տնտեսության մեջ առկա են այնպիսի ճյուղեր, որոնք իրենցից ներկայացնում են նյութական արտադրության և ծառայությունների յուրատեսակ միատեղում, և դժվար է դրանք միանշանակ վերագրել այս կամ այն ոլորտին: Օրինակ՝ տրանսպորտը, որը բնորոշվում է որպես մարդկանց, բեռների և տեղեկատվության տեղափոխում մի վայրից մյուսը[12], նշված սահմանումից ելնելով, միանշանակ պետք է վերագրվի ծառայությունների ոլորտին, մինչդեռ հաճախ դիտվում է որպես իրական հատվածի բաղկացուցիչ: Սակայն, քանի որ մենք հակված ենք որպես իրական հատված դիտել նյութական արտադրության ոլորտը, կարծում ենք, որ տրանսպորտը, ինչպես նաև այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են կապը և հեռահաղորդակցությունը, պետք է ներառել ծառայությունների ոլորտի ենթատեքստում:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ տնտեսության իրական հատվածը իրենից ներկայացնում է մրցունակ և բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկում, որի նպատակն է բավարարել սպառողների պահանջմունքները արտաքին և ներքին շուկաներում[13]:

Այստեղ, իհարկե, «մրցունակ» բառը մեզ հուշում է, որ պետք է նկատի առնել շահույթ հետապնդող ձեռնարկատիրության ոլորտը, իսկ ինչ վերաբերում է բարձր տեխնոլոգիաներին, նկատենք, որ չնայած այդ ոլորտը ևս ներառվում է իրական հատվածի կառուցվածքում, սակայն միշտ չէ, որ իրական հատվածի թողարկած արտադրանքը կարող է բարձր տեխնոլոգիական լինել (օրինակ՝ գյուղմթերքների ավանդական արտադրությունը):

Մասնագիտական գրականության մեջ «իրական հատվածը» ներկայացվում է նաև որպես տնտեսավարող այն սուբյեկտների ամբողջությունը, որոնց հիմնական գործունեությունը ապրանքների արտադրությունն է և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցումը: Շահույթ չհետապնդող կազմակերպությունները դուրս են մնում իրական հատվածի շրջանակներից[14]:

Համաձայն այս բնորոշման՝ իրական հատվածը առանձնացվում է ֆինանսական հատվածից, սակայն ծառայությունների ոլորտի գերակշիռ մասը, որը չի վերաբերում ֆինանսական ծառայություններին, ներառված է իրական հատվածում, ինչը ևս ճիշտ համարել չենք կարող:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը բերված սահմանումները և դատողությունները, կարող ենք ասել, որ տնտեսության իրական հատվածը խոշոր, միջին և փոքր այն առևտրային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնց հիմնական գործունեությունը ուղղված է շուկայում սպառողների նյութական պահանջմունքները բավարարող ապրանքների արտադրությանը:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ներկայացրած պար-

---

[11] **Румянцева Е. Е**. Указ. соч., с. 580.
[12] Տե՛ս www.ru.wikipedia.ru
[13] Տե՛ս **Зайцев Н. Л.** Краткий словарь экономиста. М., 2008, էջ 224:
[14] Տե՛ս **Сергиенко Я. В.** Финансы и реальный сектор. М., 2004, էջ 9:

բերական զեկույցներում[15] առանձնացվում են տնտեսության հետևյալ հատվածները՝ իրական, հարկաբյուջետային, ֆինանսական, արտաքին, սոցիալ-ժողովրդագրական:

Սակայն, տվյալ դեպքում իրական հատվածի համատեքստում դիտարկվում է ամբողջ համախառն թողարկումը ինչպես արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, այնպես էլ տրանսպորտի, կապի, առևտրի և այլ ծառայությունների ոլորտներում:

Մեր կարծիքով, վերլուծության այսպիսի մոտեցման դեպքում «իրական հատված» տնտեսագիտական տերմինի կիրառությունը միարժեքորեն սխալ է, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, տնտեսության իրական հատվածը ներառում է միայն նյութական արժեքների ստեղծման ոլորտը, և, հետևաբար, տրանսպորտը, կապը, առևտուրը, ինչպես նաև մնացած այլ ծառայությունները չեն կարող դիտարկվել իրական հատվածում:

Համաշխարհային բանկի ամենամյա «Համաշխարհային զարգացման ցուցիչները» (World development indicators) հրապարակման մեջ, սկսած 2009 թվականից, կիրառվում է 1989 թ. ՄԱԿ-ի ընդունած՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման միջազգային ստանդարտի 3-րդ՝ վերանայված տարբերակը (ISIC rev. 3)[16]:

Համաձայն «Համաշխարհային զարգացման ցուցիչների», աշխարհի երկրների համախառն թողարկման ծավալները ներկայացվում են գյուղատնտեսության, արդյունաբերության և ծառայությունների ոլորտներով, որոնք ըստ ISIC խմբավորում 3-ի՝ համապատասխանաբար ներառում են 1-5, 10-45 և 50-99 ենթաբաժինները[17]:

Համաձայն ընդհանրացված սահմանումի՝ տվյալ դեպքում տնտեսության իրական հատվածը կներառի ISIC խմբ. 3-ի A-F բաժինները, մասնավորապես՝ բաժին A – գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն (01, 02 ենթաբաժիններ), բաժին B – ձկնորսություն (05 ենթաբաժին), բաժին C – լեռնամետալուրգիա և հանքագործական արդյունաբերություն (10-14 ենթաբաժիններ), բաժին D – մշակող արդյունաբերություն (15-37 ենթաբաժիններ), բաժին E – էլեկտրականության, գազի և ջրի մատակարարում (40, 41 ենթաբաժիններ), բաժին F – շինարարություն (45 ենթաբաժին):

Սկսած 2009 թվականից՝ ՀՀ-ում կիրառվում է տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ՝ խմբագրված տարբերակը (ՏԳՏԴ, խմբ. 2)[18]:

Փորձենք ներկայացնել ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ, խմբ. 2) սահմանած տնտեսության այն ոլորտներն ու ճյուղերը, որոնք, համաձայն նշված տրամաբանության, կարող ենք վերագրել ՀՀ տնտեսության իրական հատվածին:

---

[15] Տե՛ս օրինակ՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-հունիսին:

[16] Տե՛ս http://www.unstats.un.org, International Standard Industrial Classification of All Economic Activities, Revision 3 (ISIC rev. 3):

[17] Տե՛ս «World Development Indicators 2009», 2010:

[18] Հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009 թ. հունիսի 3-ի թիվ 372-Ն հրամանով:

Դրանք են՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի A-F բաժինները, մասնավորապես՝

• Բաժին A – Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն,

• Բաժին B – Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում,

• Բաժին C – Մշակող արդյունաբերություն,

• Բաժին D – էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում,

• Բաժին E – Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում,

• Բաժին F – Շինարարություն:

A բաժինն ընդգրկում է բուսական և կենդանական բնական պաշարների շահագործումը, ներառում է մշակաբույսերի աճեցումը, անասնաբուծությունը, անտառային տնտեսությունը, այլ բույսերի և կենդանիների բուծումը գյուղացիական տնտեսություններում կամ բույսերի հավաքը և կենդանիների որսը բնական միջավայրում:

B բաժինը ներառում է բնության մեջ հանդիպող պինդ ապարների (քարածուխ, գորշ ածուխ, հանքաքար), հեղուկ կամ գազային վիճակում (նավթ, բնական գազ) հանքանյութերի արդյունահանումը: Այսպիսի գործունեություն սովորաբար իրականացնում են արդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունները: ՀՀ խոշոր արդյունահանող կազմակերպություններն են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ՍՊԸ-ն, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերությունը:

Մշակող արդյունաբերությունում ներառված արտադրական միավորներն իրականացնում են նյութերի և բաղադրիչների քիմիական ու ֆիզիկական վերափոխումը նոր արտադրատեսակների: Այս բաժնում դասակարգվում են նաև արտադրական գործընթացը և միևնույն տարածքում արտադրանքի իրացումն իրականացնող կազմակերպությունների գործունեությունը՝ հացի փռերը, կարի արհեստանոցները և այլն:

D բաժինը ներառում է էլեկտրաէներգիայի, բնական գազի, գոլորշու և տաք ջրի մատակարարման գործունեությունը, որն իրականացվում է հիմնական ենթակառուցվածքների (ցանցի)՝ գծերի, խողովակաշարերի, մայրուղիների միջոցով:

Այս բնագավառներում գործող խոշոր կազմակերպություններն են. գազի մատակարարման ոլորտում՝ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն, որը, ի դեպ, նաև պարբերաբար գլխավորում է ՀՀ խոշոր հարկատուների ցանկը, էլեկտրաէներգիայի արտադրության և մատակարարման ոլորտում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, Հայաստանի ԱԷԿ-ը, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀՐԱԶԷԿ)» ԲԲԸ-ն:

Այս բաժնից դուրս են մնում ջրամատակարարման և կոյուղու կոմունալ սպասարկման կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև հեռավոր տարածությունից խողովակաշարերով գազի տեղափոխումը:

E բաժինը ներառում է արդյունաբերական, կենցաղային տարբեր տեսակի պինդ և ոչ պինդ թափոնների կառավարման (հավաքում, մշակում,

հեռացում), ինչպես նաև աղտոտված հողատարածքների մշակման հետ կապված գործունեությունը: Ջրամատակարարումը նույնպես դասակարգվում է այս բաժնում, քանի որ ջրամատակարարման ծառայությունները փոխկապակցված են կոյուղաջրերի մաքրման ու մշակման հետ և հաճախ իրականացվում են նույն միավորի կողմից:

Իհարկե, այստեղ «ծառայություններ» բառի կապակցությամբ կարող է հարց ծագել. արդյո՞ք այս բաժինը պետք է ներառվի իրական հատվածում, սակայն ուսումնասիրելով ՀՀ վիճակագրական տարեգրքերում տեղ գտած վերլուծությունները՝ տեսնում ենք, որ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը և բաշխումը, ինչպես մշակող և հանքագործական արդյունաբերությունը դիտվում են որպես ընդհանուր արդյունաբերության բաղկացուցիչ, հետևաբար մենք ևս դրանք ներառում ենք տնտեսության իրական հատվածում:

ՀՀ այս ոլորտի խոշոր կազմակերպություններից են «Երևան Ջուր» ՓԲԸ-ն և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն:

Շինարարություն բաժինը ընդգրկում է ընդհանուր շինարարությունը, շենքերի և ճարտարագիտական կառույցների շինարարության մասնագիտական աշխատանքները:

Այսպիսով, առաջնորդվելով ՄԱԿ-ի տնտեսական գործունեության տեսակների դասակարգման միջազգային ստանդարտի կամ ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ ճյուղերի դասակարգման մեթոդաբանությամբ, կարող ենք առանձնացնել տնտեսության իրական հատվածի հիմնական ոլորտները, որոնք լայն առումով ընդգրկում են գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը (այդ թվում՝ մշակող արդյունաբերությունը) և շինարարությունը:

գծապատկեր 1

ՀՀ իրական հատվածի մասնաբաժինը ՀՆԱ-ում (%) (1999-2008 թթ.)[19]



Ուսումնասիրելով 1999-2008 թթ. ՀՆԱ-ում իրական հատվածի մասնաբաժնի դինամիկան ըստ հիմնական ոլորտների (մինչ համաշխարհային

[19] Գծապատկերը կազմել ենք ըստ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009» և «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004» տվյալների:

ֆինանսատնտեսական ճգնաժամը)՝ արձանագրում ենք, որ մեր տնտեսության կառուցվածքին հատուկ է իրական հատվածի համակարգաստեղծ դեր (տե՛ս գծապատկեր 1):

Ընդ որում, հատկապես նկատելի են շինարարության ծավալների աճի միտումները:

Նշված ժամանակահատվածում շինարարությունը վերածվեց տնտեսական աճ ապահովող հիմնական ճյուղի, ինչը պայմանավորված էր պետական մի շարք լայնամասշտաբ շինարարական ծրագրերի իրականացմամբ, ինչպես նաև մասնավոր ներդրումների, այդ թվում՝ հատկապես բնակարանային շինարարության ծավալների աճով: Վերջինիս հիմնական պատճառը եղել է նախորդ տարիների համեմատությամբ արտերկրից դրամական փոխանցումների, ինչպես նաև բնակչության խնայողությունների ավելի արագ աճը:

Արդյունաբերության ոլորտի մասնաբաժնի կրճատումը մասամբ պայմանավորված է նշված ժամանակահատվածում քիմիական արդյունաբերության, ադամանդագործության և ծխախոտի արտադրության ծավալների կրճատմամբ:

Այսպիսով, ՀՀ-ում իրական հատվածը ՀՆԱ-ի աճ ապահովող առանցքային հատվածն է, և, հետևաբար, դրա խթանումը, համաչափ զարգացումը և միջազգային չափանիշներին համապատասխանեցումը պետք է լինեն պետության մակրոտնտեսական քաղաքականության գերակայությունների շարքում:

ВАРДУШ ГЕЗАЛЯН – ***Определение и основные сферы реального сектора экономики.*** – В статье рассматриваются экономический термин "реальный сектор" и его определения. Термин часто встречается в профессиональной литературе, однако его определения неполно характеризуют вкладываемое в него содержание. В большинстве случаев сферы реального сектора четко не разделяются, и это становится причиной недопонимания.

Обобщая характеристики реального сектора, применяемые в экономической литературе, автор попробовал дать следующее, наиболее ёмкое определение: "Реальный сектор экономики – это совокупность больших, средних и малых предприятий, основной целью которых является производство товаров, удовлетворяющих материальные нужды потребителей. К ведущим сферам реального сектора следует отнести сельское хозяйство, промышленность и строительство".

VARDUSH GYOZALYAN – ***The definition and the main fields of the real sector in economics.*** – The present paper seeks to analyze the definition of the economic term "a real sector". One can frequently come across this term in the academic literature, but its definitions are not adequate and the fields are not exactly divided, which often tends to cause controversy.

Having reviewed various definitions from a range of sources (dictionaries of economics, encyclopedias, etc.), we have concluded that the real sector of the economy is a community of small, middle and big companies, the main goal of which is to produce goods satisfying the consumer requirements. The main fields of the real sector are agriculture, industry, manufacturing, and construction.